ցեալ ունի, յայտնի է հին դարերի պատմագիրներին Բաբերտոն անունով, այսօր աւերակ եւ անբնակ է: Ո՛չ միայն իսլամի իշխանութեան շրջանում վերանորոգուած են նրա պարիսպներն ու զօրանոցները, իշխանական պարանքն ու մթերանոցները, այլեւ այդ տեղ աշխատել են բիւզանդական ստրատելատների, հռոմէական կոնսուլների, Պարթեւ-Արշակունիների եւ Բագրատունիների ծրագրով դարէդար վարպետներ, որոնց իւրաքանչիւր շրջանից մնացորդները նկատելի կերպով իրարից տարբերւում են: Նոյն իսկ այդ տեղ Ուրարտացիներից հազարաւոր տարի առաջ շինուած են եղել աշքադարեան ամրոցներ:

Ինչպէս աւերակ է բերդն իր դղեակով, այդպէս էլ աւերակ է քաղաքն իր շուկայով, ուր 3–400 խանութաւոր կայ, բայց ժողովուրդն այնքան աղքատ է, որ ոչինչ չի գնում, այլ առուտուրը միայն արտահանութիւնն է: Ամէն կողմից հում նիւթերը–մորդ, մորթի, եղ, պանիր, բուրդ եւ ուրիշ առարկաներ կուտակում, Տրապիզոն են ուղարկում, որ փող ստանան եւ պետական հարկերը վճարեն: Քաղաքում էլ քրիստոնեայ Հայ չկայ, չքացել են արհեստաւորները, չունին հագուստ, նոյն իսկ քոչ կարող չկայ, հիւսն ու որմնադիր, որ վերանորոգէ եւ բլուածներն էլ չեն շինում: 400 տուն Հայերից, չորս,հինգ տուն էլ չթողին, որ դերձակ կամ դարբին